տված կառավարական գրութիւնը կը վայելեն։ Ասկայն այս գրութիւնը 6,000 գաղղիական տուներու ներկայացութեամբ ձեռք բերուեցաւ, և Անգղիոյ կառավարութիւնը Գաղղիոյ օրինակին հետեւելէ առաջ կը փաթաթի անշուշտ։ Բնականաբար, ամենուս փափաքն է կատարեալ բարենորոգում և բարգաւած վիճակի հասած Արմենիա մը տեսնել, և այս արդիւնքը ձեռք բերելիք միջոցը գտնել։ Զեռ ունենալիք միջոցին պատասխանատուութիւնն անշուշտ կառավարութեան վրա պիտի մնայ, որ ժողովս այժ գտնելու պէտք ունի։ Մեր հին ուսանողութիւնները կը քաջալերեն զմեզ ի նպաստ տառապեալ ժողովրդեան մ՚աշխատելու, և մեք պարտաւոր եմք Պերլինի դաշնագրին և Լորդ Սալիսպրիի փերձին յայտարարութեանց յիշեալով յառաջ տանել այս խնդիրը։ Պէտք չէ մոռնալ որ Հայկական խնդրոյն մէջ, ինչպէս Պուլգարիոյ խնդրոյն մէջ, օտար միջամտութեան երկիրք կայ։ Պերլինի դաշնագրին զարթուցած յոյսերն ի դիրն եւան, և Հայք իրենց աչքը Ռուսիոյ կը դարձնեն, որոյ հանգամութիւնը միշտ զեպ ի Տաքաս յառաջանալ է։ Վերջին պատերազմը Ռուսիոյ այս հանգամութեան օգնեց, և այժմ նորա տարածայ յառաջացման դէմ լուսոյն պատուարը՝ զարգացեալ, բարենորոգեալ և լաւ կառավարեալ Արմենիա մ՚է։ (Գ ո հ ա ր ե ա ն Ն շ ա ն ն ե ր։)

ՍԸՐ Զարէպ Տիւթ. Անգղ. կառավարութեան կողմանէ պատասխանելով, շնորհաւորից զՊ. Ճ. Պրայս իւր զեղեցիկ բանախօսութեան համար, բայց յայտնեց թէ անոր ամէն ըսածներուն հանգարտիւք չէր կրնար լինիլ։ Ժողովս ուշադրութիւնը կը հրաւիրեմ (ըսաւ Սըր Զարէպ Տիւթ) սա պարագային վրա թէ Պ. Պրայսի առաջարկութիւնը սահմանափակ առաջարկութիւն մ՚էր, ուստի լաւ չը լինիր որ խնդիրն ընդհանրացնելով համայն Օսմանեան տէրութեան վիճակը խորհրդակցութեան նիւթ ընեմք։ Պ. Պրայսի առաջարկութիւնը Պոքր-Ասխոյ և Արմենիոյ վրա էր, բայց Պերլինի դաշնագրին 61-րդ. յոդուածին վերաբերութեամբ, որ Հայոց բնակած գաւառներուն հետ միայն յարաբերութիւն ունի։ Փափաքելի է որ ժողովս այս խնդրին առանձին հետաքրքիր, անոր հետ ուղղակի յարաբերութիւն չունեցող ուրիշ ամէն խնդիրներէ անջատ, և մասէն քննէ Հայոց խնդիրը միայն։ Այնմիջոց արդի փաստական գրութեան նկատմամբ Պ. Պրայսի և Պ. Քէնեդիէյի բերած յայտարարութեանց ընդհանուր ծրագրութիւնն ալ որ կրնայ ժամանակ։ Այդ փաստական գրութեան հանգամանքները մանրամասնութիւն մը ունի ծրագիր, բայց ընդհանուր կերպու կրնամ յայտարարել թէ Արմենիոյեն եկած վերջին տեղեկութիւնը, զորս ձեռնհասքննիչը կը հաղորդեն մեզ . . . . առ՚ի վիճակին շարունակութիւնը միայն կ՚ցնցանեն։ Պոքր—Ասիա նստող Անգղիական հիւպատոսը այս կարծիքը կը յայտնէ թէ Արմենիոյ վիճակն հաւանականաբար Օսմանեան տէրութեան ուրիշ ամէն գաւառներուն վիճակէն գէշ է։ (Ա ւ շ ա գ ր ո ւ թ ի ւ ն)։ Կրկնում՚ ժողովս անգամ ուշադրութիւնն հրաւիրել Լորա Սալիսպրիի փց ամիս առաջ բրած մէկ յայտարարութեան վրա թէ. «Այս գաւառաց վիճակն ո՛րչափ մեր գոյներով նկարագրեմք քիչ է. այս վիճակին յառաջ եկող պատասխանատուութեան վրա ո՛րչափ ծանրանամք՝ նոյնչափ քիչ է . . . . . .» (Մ ա ք ա ր ե ր ք ա, մ ա ք ա ր ե ր ք ա)։ Լորա Սալիսպրիի պարպակ ահա՝ կը խօսէր, և իմ մտիս, ես Արմենիոյ արդի . . . վիճակին վրա որչափ ծանր խօսիմ՝ չեմ սխալիր։

«Յետոյ կուգայ այն խնդիրը թէ ներկայ չարիքներն ինչպէս պիտի գարմանուին։ Սըր Քէնեդիէյ Անգղիոյ յարաւոր ձեռման վրա խօսեցաւ, բայց իրոք վից տէրութեանց ծրագրման վրա խօսիլ է։ (Ծ ի ծ ա գ մ ։) Երբոյ զուարեանն այդ է բացարձակապէս, և անտեղի բան մը չեմ տեսներ այս պարագային մէջ, թէ Անգղիական կառավարութիւն յանձնած էր տէրութեանց բացարձակ հանձնարարութիւն ձեռք բերել թէ՝ Հայոց խնդրոյն մէջ և թէ՝ Արեւելեան խնդրոյն միւս երեսներուն մէջ։ Այս իրողութիւնն իսկ հարիւրաւոր կ՚ընէ որ այժմ Դրէնն պահանջուած բարենորոգմանց մանրամասնութիւններուն վրա զգուշութեամբ խօսիմք, ուստի մինչև որ միւս տէրութեանց հանձնարարութիւնը չը ստանամք, չեմք կրնար այդ նկատմամբ յայտարարութիւն մ՚ընել ժողովոյս։ Պ. Պրայսոյն խնդրոյն վերաբերեալ նոր թուղթերը խնդրած լինելով, զանոնք ժողովոյս մատուցանել խոստանալով հանդերձ, պէտք է խնդրեմ թէ՝ միւս տէրութեանց հաւանութիւնն ստանալ հարկ լինելով, քիչ մը յապաղում անհրաժեշտ է։

«Մինչև ներկայ նախարարութեան պաշտօնի անցնելուն թուականը, ժողովս տեղեկութիւն ստացած էր նախարդ նախարարութեան պահանջած բարենորոգմանց նկատմամբ։ Դիտէք թէ Լորա Սալիսպրի մեծապէս կը փափաքէր որ նոր ստանձնութիւնն Եւրոպացւոց ձեռքը կապսի, որոց հաւաքիներն Եւրոպայիք լինին և տաւանրդը Ջնջուի։ Եաբէն Լորա Սալիսպրիի իւր պահանջմունքը չաստիճանաբար և բարենորոգմանց պարզ պէտքերու հետ ի հարեալ մը հաստատուելու ամենէն աւելի նեղութեան մէջ կը գտնուին Քրդաց ազերամերուն։ Դժբաղդաբար, այս չափաւոր խոստումներն ալ իրացած չը լինելով, Արմենիոյ վիճակն առ այժմ գէշ է։ Իրաւ է որ մի քանի անգամ բարեկարգական ձեռնարկք եղան։ 1879-ին Դուռը Քօմիսէրներ զրկեց Պոքր-Ասխոյ տարեկան կողմերն, որպէս զի ըրխատեաց ժողովրդեան գանգատները քննեն։ Սրբ Հէկրի Լէյրբա խրնգրեց որ անգղիացի ատյաք այդ Քօմիսէրաց ընկերանան և այս խնդիրն ընդհանուրապէս։ 1879-ին տեղական խորհրդատու յանձնախումբ մը զումարեցաւ, և քանի մը շաբաթ նիստեր ըրաւ զորձադրելիք բարենորոգումները քննելու համար։ Քրիստոնէից խնդրած բարենորոգմանց մէկ ծրագիրը ժողովոյս ներկայացուած է, և եթէ չէ ներկայացուած, պիտի ներկայացուի։ Այն յանձնախմբին յանձնարարութիւններն ի գործ դնելու համար միջոցներ ձեռք չառնուեցան։ Զեռնարկ մը սակայն ցուցուց թէ Դուռը չէր ձանչեր սկզբունք մը, որուն Լորա Սալիսպրիի մեծ կարեորութիւն կուտար։ Ն. Վանեմիթիւը միշտ պնդած էր որ Հայկական գաւառաց մէջ բարի կառավարչէ քանի մը տարի իրենց պաշտօնին վրա մնան։ Այսու հանդերձ, Ագէ-ոմին պէյ (փաշա), որ մեծ ազդութեան տէր անձ մ՚է, և որ ամէն տեսակէտով բարի կառավարիչ մ՚էր, պաշտօնանկ եղաւ, և այսպէս մեք բարենորոգմանց ձանրուն մէջ միջոնեակ զործադրեան ամէն ապահովութիւն կորուսինք։ Պէտք չունիմ Պոքր-Ասխոյ և մասնաւորապէս Արմենիոյ բարենորոգմանց վիճակին վրա աւելի ևս ծանրանալ այս ուղղութեամբ։

«Եւրոպիոյ վից տէրութեանց կողմանէ Դրան ներկայացեալ Համիտեան ծանուցագրին Հայոց խնդրոյն արդի վիճակին նկատմամբ Վեհ. Թագաւորն կառավարութեան տեսութիւնները կը պարունակէր, և Դուռը պատասխան մը տուաւ այդ ծանուցագրին։ Բ. Դուռն իւր պատասխանագրոյն մէջ կը միտէր այն գլխաւորական ընկեր հիւպատոսաց կողմանէ Անգղիական կառավարութեան տրուած տեղեկութիւններուն, որոյ տեղեկագրերուն վրայ արդէն խօսեցայ։ Այս ձիւթրմնիներուն տեղեկագրերը Դուռն իւր զրպարտութիւն ևս կը նկատէր։ Յաւելի է որ Թուրքիոյ կառավարութեան այնքան պիսի չհասցուցեր էին բանն, որ այդ սպայիկ տեղեկագրերը ի գործ համարէր։ Դուռն զերազանց բնաւորութիւն ունեցող մարդիկ են, և անձնական շահ չունենալով, ճշմարտութիւնն և եթ երևան հաներ։ Հարկաւոր գտնեմ ես Երեքի ամէն պարագային մէջ մեր հիւպատոսաց տեղեկագրերուն ճշգրտութիւնն այդ գաւառաց մէջ նստող ամենէն պատուաւոր անձանց վկայութեամբ հաստատեալ է, և հետևաբար, յոյժ գործադրելի մ՚է որ անոնց տեղեկագրերը Դանէն անարգուած են։ Բ. Դուռն աւելի յառաջ երթալով, Հայկական ժողովրդեան տիրապետելիք աշխարհի աչքն դրուած թիւերուն նկատմամբ ամենամեծ տարակոյս ձգելու ձեռնարկ մ՚ըրաւ։ Արդ, Հայ ցեղին բնակած այլ և այլ գաւառներուն մէջ ժողովրդոյ թուոյ խնդիրն ամենամեծ կարևորութիւն ունի, զի մինչև որ քրիստոնեայ և մահմետական ժողովրդեան բազմատեսակ համեմատութիւնները չը զիտնամք, անտոց ապագայ կառավարութեան համար ծրագիր մը չենք կարենար կը լինիր։ Այս պատճառաւ, Վեհ. Թագաւորդ կառավարութիւնը մեծ կարևորութիւն կուտայ ճշդիլ տեղեկութիւն ստանալու այն այլ և այլ ցեղերուն թուոյն նկատմամբ, որք Պերլինի դաշնագրին 61-րդ յոդուածով յիշուած գաւառաց մէջ կը բնակին։ Դուռն իւր թիւերը տաւ։ Ես Պ. Պրայսի չափ յառաջ չեմ երթար՝ առանց մինչև ցարդ եղածէն աւելի կատարեալ քննութեան, ընդունելով այն թիւերը, զորս Հայոց Պատրիարքը տուած է այդ ժողովրդոյ նկատմամբ. բայց միւս կողմէն, Վեհ. Թագաւորդ կառավարութիւնն տուած տեղեկութեանց յենլով, չենք կրնար Բ. Դրան վիճակագրութիւնն ընդունիլ։ Այս պարագայից մէջ, Անգղիական կառավարութիւնը միաք ունի այդ Հայկական գաւառաց մէջ բնակող այլ և այլ ցեղերուն թիւրն որոշել տալ։ Ասոր համար Եւրոպական ապայից ձեռամբ քննութիւն պիտի բացուի, և յայնժամ մեր առջև վիճակագրական կարգ մը տեղեկութիւններ պիտի ունենանք, որք այդ գաւառաց ապագայ բարենորոգմանց հիմ պիտի լինին։ Թուրք կառավարութիւնը բոլոր նահանգաց համար մի և միօրինակ օրէնք առաջարկեց. բայց Վեհ. Թագաւորդ կառավարութիւնն անբաւականութիւնի նկատմանց պատճառ պահանջում մը։ Անհնար է Թուրք տէրութեան բոլոր նահանգաց համար միայն մէկ օրէնք հաստատել։ (Մ ա ք ա կ ը բ է՛ք մ ա ք ա կ ը բ է՛ք)։ Համիտեան ծանուցագրը Դրան ներկայացեալ յունիս 12-ին, և Հայոց խնդրոյն վերաբերեալ մասին պատասխանն, որ յուլիս 7-ին արուեցաւ, խորհրդարանին պիտի ներկայացուի։ Թիշեցի այն երկու կէտերն, յորս այդ պատասխանագիրն ուշադրութեան արժանի է. այն է՝ նախ՝ յոյժ ձախողարար յայտնուած տարաբերման Անգղիական հիւպատոսաց ճշմարտախօսութեան մասին, և երկրորդ՝ ժողովրդեան վիճակագրութիւնը։

«Թուրք կառավարութիւնն, իւր պատասխանագրոյն մէջ երկու հնարաւոր բարենորոգումներ ալ յիշած է։ Այն է՝ Քօմիսէներու (գիւղական) բանտումն և առանց կրնական խորութեան պարկիշա և կարող անձանց պաշտօնի կոչումն, և այս օրինակ ուրիշ խոստումներ։ Բնականաբար, Անգղիական կառավարութիւնն ընդհանուր խոստումներով գոհ չը կրնար լինիլ։ Երկար տարիներէ ի վեր այսօրինակ խոստումներ եղած են նոյն իսկ աւելի զօրաւոր բառերով քան ինչ որ Դուռը գործածած է այս անգամ։ Միւս կողմէն, արդէն բացարած պատճառներուս համար անհնար է ինձ որ այժմէն ժողովոյս իմացնեմ այն ձեռնարկները՝ զորս Անգղիական կառավարութիւնը կառաջարկէ ձեռք առնուլ ի պատասխան Դրան այս առաջարկութեան։ Այդ ձեռնարկները միւս տէրութեանց հետ համաձայնութեամբ պիտի գործադրուին, և հետևաբար, չեն կրնար այժմէն ժողովոյս հաղորդուիլ։ Այսու հանդերձ, պատաւոր է ինձ (Պ. Պրայսի) կրնամ խօսք տալ որ Անգղիական կառավարութիւնն Ասիական ժողովրդեան ձիշդ թուոյն վրայ տեղեկութիւն ստացածին պէս խորհրդարանին պիտի հաղորդէ։ Առանց զատ, պատասխան բարեկամիս (Պ. Պրայսի) կրնամ խօսք տալ որ Անգղիական կառավարութիւնն Ասիական ժողովրդեան ձիշդ թուոյն վրայ տեղեկութիւն ստացածին պէս խորհրդարանին պիտի հաղորդէ։ Առանց զատ, պատասխան բարեկամիս (Պ. Պրայսի) որ Հայոց խնդիրը ժողովոյս առջև հանելով՝ այս կերպիւ ցոյց տուաւ թէ այդ խնդրին Անգղիական խորհրդարանին և Անգղիական կառավարութեան միաքը կը զրաղեցնէր միշտ։ Այդ խնդիրն Արեւելեան խնդրոյն երկք ձիւղերէն մին է, զոր մեր միաքը պիտի պահեմք՝ միւս երկու կէտերը տէրութեանց հետ բացարձակ հանձայնութեամբ կարգադրած ժամանակին։»

(Մասին)

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Մի չաբաթի է որ Նուսիում բոլորը մը անուանոր օձի մասին են խօսում։ Մի օձ, ասում են, պրաստարվել է մի թուրք բրատի 12 տարեկան աղջկայ վրա։ Ահա մեկնում Աղջիկը և մայրը միասին քրնած են լինում։ Աղջիկը մի ցորտ բան զգացեալով իր կուրծքի մէջ, զարթնում է և մայր խնդրում է նրանց վառել։ Ձրագը վառելուց յետ տեսնում են, որ գլ-մի օձ է։ Դեռ իրանք չը փոքիված, օձը կամացուկ դուրս է գալիս սենեակից առանց մի վնաս հասցնելու նրանց։ Դրա տեսնելայ գիրերը չը նայելով որ գուրբ բա կոգսած է լինում, նոյն օձը էլի գալիս է աղջկայ ծոցում նստում է։ Աղջիկը և մայրը տեղական սովորութեան համաձայն (որ ընտանի օձին սպանել մեղք կը համարին) օձին չեն սպանում, այլ հեռացնում են սենեակից։ Երբ առաւօտը գուրբ բաց են անում՝ տեսնում են օձը գուրբը դրան մատ է։ Օձը սոգում է մտնելայով դէպի աղջիկը, իսկ սա օձից հեռանալու գիտաբրութեամբ ուր գնում է, իբր թէ օձն էլ հետևում է նրանս։ Այս մասին հրատարում են էֆենդուն և խորհուրդ հարցնում։ Սա պատասխրում է չը սպանել, հայ աղջկան ծածուկ հարեանի տունը ուղարկել և տեսնել, թէ օձը պտնող էլ աղջկան կը գանի թէ ոչ։ Էֆենդու ասածի համեմատ կատարում են, օձը գնում է հարեանի տունը, և իրր Ա. այս անգամ էլ աղջիկը թոյլ է տալիս նրան գալ իր գիրկը մտնել։ Պատում են, որ կանցել են օձին սպանել, այլ ես աղջիկը չէ թոյլ տուել։ Ասում են, որ օձը չատ անգամ պոչի վրա կանգնելով, հանում է լեզուն և ֆեյեդեզ նայում աղջկայ երեսին, երբեմն համբուրում աղջկայ շրթունքներին, երբեմն փաթաթվում նրա վրով և երբեմն ձայներ հանում, այնի պէս մկլում։ Ուր գնում է աղջիկը՝ օձը նրան հետևում է։ Այսօր էլ ասում են, որ աղջկան տարել են Աղքար և այժմ օձն էլ չէ երեւում։ Ահա ամենատարերի բոլոր պատմութիւնը։

Խնդիրն այն է, որ խեղճ աղջիկը մի քանի օր առաջ խայթված է եղել օձից, այնուհետև հիւանդացիլիւը մէկ կողմից, երկիրը միւս կողմից, ձգում են նրան տեղացին, հարազատական գրութեան մէջ և նա ամէն գիշեր տեսնում է իր ծոցում օձին։ Նրա ծնողները փոխական բժշկի խորհրդին դիմելու, գիտում են կարարդին, որը ամենատարերիներ աւելի սատակացնում է։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԵՐ

ՓԷՐԻՆԳ, 27 օգոստոսի։ Լանգլանդիաները պեռութիւնների միջանց մէջ ծովային ցոյցի մասին վերջացան միասին հանձայնութեամբ։ Երկու ֆրանսական նաւերին հրամայված է այսօր ուղևորվել դէպի Լագաւա։

ԼԷՐԿՕՍ, 27 օգոստոսի։ Լարկօվի առաջին փոխադարձ կրեդիտի ընկերութիւնը վերջ դրեց իր վճարումներին։ ընկերութեան պարարք (պասիվ) մեծ է։ Լանկի գանձապետ, Լ՚ավլէնկո, կողոպտեց կասան և տարաւ 200,000 բուբլ։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27, օգոստոսի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին չորքանի արժէ 94 ր. 19 կ., երկրորդ 92 ր. 50 կ., երրորդ 93 ր. 50 կ. չորրորդ 92 ր. 62 կ., ներքին առաջին 5% փոխառութեան տոմսակը արժէ 221 ր. 50 կ., երկրորդ 219 ր. 50 կ., արեւելեան առաջին 91 ր. 25 կ., երկրորդ 91 ր., երրորդ 91 ր. 25 կ., սակի 7 ր. 85 կ.։ Լ՚օգտնի վրա առուսաց 1 բուբլ արժէ 25,06 պէնս, առուսաց 100 բուբլ Շամբորգի վրա արժէ 214 մարկ, 50 պֆ., Փարիզի վրա 264 ֆրանկ, 50 սանտիմ։ Խօրասյի տրամադրութիւնը թոյլ է։

Խմբագիր—Տպագրատոր ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱՐՈՒՆԻ